

ՏԱՃԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԻ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՍԿԻՐ

ՋԱՐԺԱՅԻ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻԻԲԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱՐԱԹ, 6 ՆՈՅԵՄԲԵՐ 1910

ԹԻ 32

“ՏԱՃԱՐ”, Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դրու՛ն
Գաւառաց համար տարեկան	40 »
Արսասահմանի համար տարեկան	10 ֆրանկ
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Բաժանորդագիրները կանխիկ են

«ՏԱՃԱՐ»-ի թէ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Ջարմայր Քահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեփքաւ, Հայոց եկեղեցի

درسمادته بشکطاشده ارمنى کليساسنده (داجار) غزتمى مديرى پاپاس زارمار

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

Ջարմարճըլար, Յակոբեան խան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմբարեան
2. Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Գալէմբարեան
5. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիստակէս Բնյ. Հրսարեան
7. Տ. Զարմայր Բնյ. Կէզիւրեան

ՎԱՐՁԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուրբաս Բնյ. Պալլազեան
5. Տ. Պողոս Բնյ. Պէյազեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Անանեան
8. Տ. Գրիգոր Բնյ. Ճէպէճեան

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

«Տ Ա Ճ Ա Ր» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ.—Առաջն. Փոխանորդ
Տ. Արսէն Բնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ.—Տ. Ռուբէն Բնյ. Գա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Գալիմանեան
ԱՅՆԹԱՊ.—Տ. Գարեգին Բնյ. Պողարեան
ԱՅԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Խաչատուր
Ա. Բնյ. Տօնէլեան
ԲԱԲԵՐԴ.—Մ. Սանտեսան էֆ.
ԴԱՂԱՏԻԱ.—Առաջնորդ Տ. Բաբգէն Եպսկ.
Կիւլէսէրեան
ԴԱՀԻՐԷ.—Տ. Յարութիւն քնյ. Սար-
գիսեան
ԵԴԵՍԻԱ.—Բ. Թիւրաքեան էֆ.
ԵՕԶՂԱՏ.—Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.
Դիմաքսեան
ԵՐԶՆԿԱ.—Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ.
Փէրտանճեան
ԶՄԻՒՆԻՒԱ.—Տ. Յարութիւն Բնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ.—Տ. Գալուստ Բնյ. Տ.
Գալուստեան
ԽԱՐԲԵՐԴ.—Առաջն. Տեղապահ Տ. Գէորգ
Ծ. Վրդ. Ասլանեան
ԿԱՐԻՆ.—Առաջնորդ Տ. Սմբատ Եպսկ.
Սառտէթեան
ԿԻՐԱՍՈՆ.—Մարթոս էֆ. Թոքատլեան
ԿԻՒՄԻԻԼՃԻՆԷ.—Տ. Ներսէս Բնյ. Նշան-
եան
ՀԱԼԷՊ.—Առաջն. Տեղապահ Տ. Շահէ
Վրդ. Գասպարեան
ՄԱՆՉԷՍԹԸՐ.—Առաջնորդ Տ. Գէորգ Ս.
Եպսկ. Իւթիւճեան
ՄԱՐԱՇ.—Տ. Հմայեակ Բնյ. Վարժա-
պետեան

ՄԱՐԶՈՒԱՆ.—Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ.—Տ. Ոսկի Բնյ. Պիպիեան
ՆՈՐ ԶՈՒՂԱ.—Առաջն. Փոխանորդ Տ.
Բազարատ Վրդ. Վարդապետեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Նաթան Բնյ.
Տատեան
ՈՒՇԱՔ.—Կարապետ էֆ. Բէնեանեան
ՊԱՆՏՐՄԱ.—ՊԱԼԼԻՔԷՍԻՐ.—Առաջնորդ Տ.
Կարապետ Եպսկ. Մազլումեան
ՊԱՂՏԱՏ.—Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպսկ. Կէօմրիւքեան
ՊԱՅՐԱ.—Կարապետ էֆ. Բէրթմէնեան
ՊԱՐՏԻԶԱԿ.—Յովհաննէս էֆ. Տ. Կա-
րապետեան
ՊՐՈՒՍԱ.—Առաջնորդ Տ. Յովհաննէս Ս.
Եպսկ. Արշարունի
ՌՈՒՍՃՈՒՔ.—Տ. Մկրտիչ Բնյ. Մըր-
նիկեան
ՌՈՏՈՍԹ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բար-
թոլ Ա. Բնյ. Թագմեան
ՍԱՄՍՈՆ.—Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.
Օտապաչեան
ՍԵԲԱՍՏԻԱ.—Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բնյ. Օտապաչեան
ՍԵԼԱՆԻԿ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բնյ. Թուխմանեան
ՍՕՅԻԱ.—Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մեսրոպ-
եան
ՏԱՐՏԱՆԷԼ.—Տ. Դիոնեսիոս Բնյ. Տրէդ-
եան
ՏԷՏԷ—ԱՂԱՃ.—Տ. Գարեգին Բնյ. Տէօլ-
էթեան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ.—Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԴԱ.—Տ. Գէորգ Բնյ. Թէրզեան
ՏՓՂԻՍ.—Հ. Առաքելեան
ՓԱՐԻԶ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Վառձա-
պուհ Բնյ. Բիպարեան
ՔՂԻ.—Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԷ.—Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
ՖՐԷԶՆՕ.—Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՔԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

— ՏԱՔԱՅ, 6 ՆՈՅԵՄԲԵՐ 1910 —

ԹԻԻ 32

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Ուղերձ առ Վեհ. Հայրապետն Հայոց. ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿ.—Երախտագիտութիւն առ Վեհ. Հայրապետն, ԽՄԲ.—Ինչո՞ւ կ'ուժանանք, Յ. ԱԼԹՈՒՆԵԱՆ.—Դպրոցավարութեան պայմանները, ԲՐՕՑ. ՔԱՅԱԵԱՆ.—Ուէրդ (Քերթուած), ԼՈՒՍՆԹԱԳ.—Մ ՌՅՈՒԱԾ ԷԶՆՐ, Կիրակին եկեղեցիին մէջ, Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ.—ԴԻՍԵՆՈՒԱԿԱՆ, «Կրօնի Դասեր» Տ. Մուշեղ եպս.ի, ՀՄ. ՔԶ. ԷՔՍԷՐՃԵԱՆ.—Պօսպրնի Հայերն առ Ս. Պատրիարք Հայր, Մ. ՄԱՐՏԻԿԵԱՆ.—ՕՏԱՐ ԵԿԵՂԵՍԻՆՆԵՐ, Ռուսական եկեղեցի.—ԱԶԳԱՅԻՆ ԿՆԱՆԻՔԸ, Շարժումն լուրերը:

ՈՒՂԵՐԶ

Ա Ռ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՆ ՀԱՅՈՑ

Տ. Տ. ՄԱՏԹԵՈՍ Բ. ԵԶՄԵՐԼԵԱՆ

«Ես եմ, մի՛ երկնցիք»

(Ա.Լեւոնյան)

Բոց ու փայլակ կը շողան նայուածքիդ մէջ կորովի.
Եւ սակայն ի՞նչ ճաճանցով լուսածրպիս գորովի.
Բեզ կը ձրգես մեր սիրտերն՝ ինքնահրաւեր եւ անձիգ,
Երբ կը քրչիս ըսել մեզ. «Ես եմ, դու՛ մի՛ երկնցիք»:

Անպրոպ ու շանք կը քրնդան ձայնիդ մէջ վեհ՝ տիպական,
Երանաւէտ քերկրանքի ի՞նչ քաղցրահոտ շեշտ սակայն,
Լոնցնելով շիւղի մեր մէջ ամեն ձիւ ու ձիւ.
Կը մոգէ զմեզ մնջելով. «Ես եմ, ո՞հ, մի՛ երկնցիք»:

Օրենք՝ հրաման է համակ կամքիդ զօրեղ՝ երկաթի.
 եւ սակայն ի՛նչ շնորհ ու սէր օծուն շրթնէդ կը կաթի
 Ընդոսնելով երբ ամեն պայմանեայ ձեռ ու կեղծիք
 Կ'ոգելորէի հայրաքար. «Ես եմ. մի՛, մի՛ երկնչիք»:

«Ես եմ...» — Դո՛ւն ես, ո՛ր Հայր մեր, մենք կը ճանչենք քո զգեց՝
 Ժողովուրդիդ յոյսերուն խորանին վրայ ողջակէզ.
 Այդ բոցն ու փայլն աչերուդ՝ Հայուն արցունքն են անվերջ,
 Ամպրոպն ու շանթը ճայնիդ՝ Հայուն մերթիկն է գոռ՝ պերճ,
 Օրենք՝ հրամանը կամքիդ, ո՛հ, Հայուն խիղճն է մաքուր,
 Դարերու հոծ մըքուքեան խորն ծածկուած թափափուր:

Այդ արցունքին ծիածանն, այդ մերթիկն ջիւնը երկինքն
 Ու այդ խղճին սուրբ խորանն հայրական սէրդ է սուկ ինքն,
 Որով ամենքս առըցուն
 Հրածեշի դառն այս պահուն,
 Ասպարեզնու՝ գէթ մի պահ՝ մոռցած սաժանքը լեղի,
 Տասնեակ որդիքդ կ'երգենք, իբրեւ սաւիղ սասնաղի:

Ի՛վ Դու, Ոգիդ Հայրենեաց, հրաշագործակ զօրութիւն,
 Որ Յոյսին՝ շողն, Հաւասքին՝ ցոյլն, Աստուծոյ շունչն ես Դուն.
 Պահե՛ միշտ Հայրը Հայուն՝ իր գահուն վրայ անսասան,
 Իր փառքին մէջ աննկուն.
 Անոր կեանքին եւ խղճին եղիւր հրեշտակը անունն:

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿ.

Սեբաստիոյ(*)


(*) Դեր. Տ. Թորգոմ Ս. Եպիսկ. Դուշակեան, մէկը ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին վերջիններ ամսոյ մէջ ձեռնադրած տասը եպիսկոպոսներէն, այս գեղեցիկ քերթուածը գրի առած է ի Ս. Էջմիածին, նորապսակ եպիսկոպոսներուն մեկնութիւն օրն իսկ, այն խորունկ տպաւորութեան տակ, զոր—ինչպէս կը զրէ հեղինակը՝ Խմբագրութեան ուղղուած մասնաւոր գրութեան մը մէջ,— Ն. Ս. Օծուծիւնը գիտէ Թորգոմ իրեն ներկայացողներուն վրայ, հայրապետական պատկառանքի եւ լըջութեան շուրին խառնելով հայրական սրտի բաղդութեան շնորհքը:

ՈՐԴԻԱԿԱՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ս. Էջմիածնէն դարձող նորապսակ եպիսկոպոսներէն՝ Երուսաղէմի Պատր. Տեղապահ Դեր. Տ. Դանիէլ Ս. Յակոբեան աւետած է Թերթիս Տնօրէն-Խըմբագրին Թէ Ն. Ս. Օծուծիւն Ամենայն Հայոց Հայրապետը՝ Վեհ. Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍ՝ բարեհաճած է գնահատական խօսքեր ուղղել Տաճարի Խմբագրութեան և անոր ուղղութեան մասին:

Հայրապետական այս բարձր գնահատութիւնը խնդութեամբ կը լեցնէ Թերթիս Խմբագրութիւնը, որ երախտապարտ և քաջալերուած կը զգայ ինքզինքը՝ աւելի եռանդով նուիրուելու ընդգրկած գործին, ի փառս և ի պայծառութիւն Հայաստանեայց ուղղափառ Ս. Եկեղեցւոյն:

ԻՆՉՈՒԻ ԿՈՒԾԱՆԱՆՔ



Ամէն նախանձայոյզ քրիստոնեայ ու ճշմարիտ եկեղեցասէր դառն վիշտերով կը համակուի, երբ կը տեսնէ որ ստուար մաս մը օրըստօրէ կ'օտարանայ, կ'ուժանայ իր և իր հայրերուն Աստուծոյն, աննման կրօնէն ու Մայր-Եկեղեցիէն, որուն ծոցին մէջ ու հովանիին տակ դարերով ապաստաներ, աներ ու պահպանուեր է, սպառնալից փոթորիկներու մահաճոտ շունչէն, արիւնաբորբ ամպրոպներու արհաւիրաց որոտումներէն մազապուր պրծելով և իր գոյութիւնը պահելով՝ կարծես աստուածային մասնաւոր տնօրինութեամբ և հրաշալիօրէն: Եւ այսօր՝ այլասերելով օտարամուտ և եկամուտ գաղափարներէ կ'ընդվզի... Կ'ըմբոստանայ ապերախօրէն, քանդել աւերել ուզելով ինչ որ կը վերաբերի հինին, ճիշդ գողէճներէ, համալսարաններէ շրջանաւարտող այն փքոցուռոյց, ինքնահաւան, խորխոր պատանիին պէս, որ վերագաւառելով իր ծնողաց անուշիկ օճախը, կը սկսի բրտօրէն վիրաւորել իր հայրիկին ու մայրիկին—որոնց գուրգուրանքին առարկայ եղեր էր տարիներէ ի վեր—արժանապատուութիւնը, յարձակիլ կատաղօրէն անոնց նուիրական հաւատալիքներուն, դաւանանքին ու պաշտամունքներուն, զսնոնք իրեն նմանցնելու յիմար մտածութեամբ:

Ուրախալի պարագայ մըն է, սակայն, որ տակաւին մեր մէջ բոլորովին մարած չէ աստուածապաշտութեան ու կրօնասիրութեան կայծը: Տակաւին մաս մը, մեծագոյն մաս մը, ցոյց կուտայ իր հաւատարմութեան ու եռանդին նշանները՝ պահանջելով բարեկարգ ու չինիչ Եկեղեցի մը, փափաքելով մօտեցնել զայն իր նախնի պարզ վիճակին, մաքրելով զայն կարգ մը յետասանուտ և բռնի ուժով մտցուած աւելորդապաշտութիւններէ ու անպէտ ձէսերէ: Կատարելապէս համամիտ եմ ասոր և բարեկարգութեան ջերմ սիրահարներէն մէկը. այսու ամենայնիւ ասիկա կատարեալ դարման մը չեմ կրնար ընդունիլ և

ոչ ալ եկեղեցին այս վիճակին մէջ թողուլը լման և զօրաւոր պատճառ մը՝ մեր հայ համայնքին ինկածութեան, ցուրտ վերաբերումին և ուժացումին: Շատ շատ կրնայ բաւական պատճառ մ'ըլլալ, այլ ոչ բուն և կատարեալ պատճառը: Կան մէկէ տեւի պատճառներ, որոնցմէ գլխաւորները հետեւեալներն են.—

Ա.—Արդի նիւթապաշտութեան ծաւալումը մեր մէջ:

Բ.—Իմաստակներու ծաւալումը:

Գ.—Արժաթսիրութեան և աշխարհասիրութեան ծաւալումը:

Դ.—Տնտեսական տաղանապի ծաւալում:

Ե.—Անարժան կղերներու ծաւալում:

Ահա՛ գլխաւոր հինգ պատճառներ, որոնց խորամուխ ըլլալ իմ կարողութենէս վեր է թէւ, բայց կը բաղձամ անցողակի մէկ քանի խօսքեր ըսել:

Ա.—Արդի նիւթապաշտութեան ծաւալումը մեր մէջ.—Ասոնք նշաններն են զանազան և կը պնդեն որ թէ՛ կենդանական, թէ՛ բուսական և թէ՛ ամբողջ տիեզերք նիւթին արգասիքն է. հետեւաբար ոչ Աստուած կայ, ոչ յաւիտենականութիւն, ոչ երկինք, ոչ դժոխք. ամէն բան «ունայնութիւն ունայնութեանց» է:

Ինձի համար յաւանութիւն պիտի ըլլար նիւթերու ուսումնասիրութեան մէջ մտնել. միայն սաչափը ըսեմ թէ ամենրիկեան ու եւրոպական երկիրներու մէջ արդէն անոր դամբանականը խօսած ու հոգեհանգիստը կատարած են: Մեր մէջ է որ զեռ նար կը սկսի նիւթապաշտութեան վարդապետութիւնը: Մենք արդէն ինչ բան կայ որ օտարէն չառնենք: Անոնց բորբոսացուցած, մքրտած, լիկած ու մէկգիւղի ձգուած գաղափարները կ'առնենք ու կը հագնինք—եթէ կարելի է այս բացատրութիւնը գործածել—ու մինք ալ ժամանակ մը այդ միջոցներէն ախտավարակուելէ յետոյ, խելքերնիս գլուխնիս կուգայ, բայց դժբախտաբար ստուար խուճը մը արդէն փնտտուած կ'ըլլայ: Բաղադրութեան, Բրիտանիկութեան լոյսը Արեւելքէն Արեւմուտք անցաւ, և ահա կարծես անոր հակադրեցութեամբ մոլորն ու

խաւարը կը տարածուի Արեւելքի վրայ: Կարծես աւետարանական ճշմարտութիւն մըն է որ ի գործ կը դրուի: «Յետինները առաջին պիտի ըլլան և առաջինները յետին»:

Բայց չանցնինք մեր նիւթին սահմանէն: Ես կը խորհիմ թէ նիւթապաշտ փրկիստիաններ իրենց ուշն եւ ուրուշը արտաքին աշխարհին վրայ կեդրոնացնելուն համար է որ նիւթէն անդին բան տեսած չեն: Ես պիտի ուզէի նմանցնել ասոնք գիւղացիի մը որ իր գիւղէն անդին ոչնչութիւն կ'ենթադրէ, և կը կարծէ թէ միմիայն իր գիւղին մէջ արեւ կայ, միմիայն իր գիւղին մէջ լուսինը կը շողայ գիշերները, միմիայն իր գիւղին մէջ կը վառին ատոդերը և անկէ անդին... բան չի կայ: Ասոնք թեւեւս ըսեն ինձ.—Տարբեր աշխարհ մը չկայ որ ուսումնասիրենք: Կը պատասխանեմ. այո՛ չի կայ ձեզի համար, ինչպէս չի կայ գիւղացիին համար վայր մը իր գիւղէն անդին: Ոմանք ալ պիտի ըսեն. «Այդ քու ներքին աշխարհ ըսածդ մենք մտած, ելած, քննած հասկցած ենք որ բան չի կայ, ատոնք երեւակայական աշխարհներ են: Ասոնց ալ կը պատասխանեմ.—Կը սխալիք, բարեկամներս, երբէք չէք քննած, երբէք չէք տեսած ու հասկցած: Դուք ալ կը նմանիք մարդու մը որ գետեզերքը կեցած, ապուշ ապուշ կը նայի ջուրին մէջ լողացողներուն, կը դիտէ անոնց շարժումները և կը կարծէ թէ սորվեցաւ լողալու գաղտնիքը, բայց խաբուած է: Լողալու գաղտնիքը սորվելու համար մէջը մտնիլ պէտք է, և ոչ թէ դուրսէն դիտել: Թեւեւս լողացողէ մը աւելի կրնաք ճառել լողալու արուեստին վրայ, ստուար հատորներ գրել, բայց՝ աւա՛ղ՝ դուք չէք գիտեր լողալ: Կ'ուզէ՞ք գիտնալ թէ կա՞յ Աստուած մը, յաւիտենականութիւն մը, երկինք մը, գոփսք մը. յարաբերութեան մտէք Աստուծոյ հետ ու պիտի գիտնաք: Հնազանդեցէ՛ք ու պիտի հասկնաք: Ընկերութիւն մը կրնա՞յ ինձ գաղտնիք տալ, մինչեւ չանդամակցիմ: Վարպետ մը կրնա՞յ ինձ սորվեցնել արհեստ մը, մինչեւ որ տալիսներով իր թելին տակ չմտնեմ: Սի-

րելի բարեկամներ՝, նիւթէն անդին կեանք կայ, հոգեկան աշխարհ մը կայ, յաւիտենական իրողութիւններ կան, որոնց կրնանք վերահասու ըլլալ փորձառութեամբ միայն:

Կը փափաքիմ նիւթապաշտ վարդապետներու ուշադրութիւնը հրաւիրել հետեւեալ տողերուն վրայ, զորս քաղած ենք Վալէնտ Գուքի «Is there a God?» գրքէն:

«Փրօֆ. Չ. Հ. Տարվին, բարեչընթիւն մեծ վարկածին գաւազնը, 1905 Սգ. ին Բէյքիթաունի մէջ հաւաքուած Անգլիական ընկերութեան նախագահական ճառին մէջ խօսեցաւ հիւլէնիքու բաժանմանց վրայ և ըսաւ. «Անցեալ քանի մը տարուան Լիւնարտի, Րոնիկէնի, Պիշրէլի, Բիւրիի և իմ պաշտօնակիցներու» Լաքնօրի և Թոմսընի՝ և շատ ուրիշներու ելեկտրական հետազոտութիւնները ցուցուցած են թէ հիւլէն անբաժանելի չէ, և լոյսի հոսանք մը նետուած է անով շամանդաղին յետին կազմակերպութեան վրայ»: Տարբեր բառերով ինչպէս Փրօֆ.ը կը մատնանշէ. «Տարբեր անցելոյն մէջ յաւիտենական եղած չեն, և ապացոյց ալ չի կայ հաւատալու թէ ապաւնիին պիտի ըլլան»: «Այս տեսակ հետեւութիւն» կ'աւելցնէ ան, «բացարձակ ընդգրկութիւն մըն է բոլոր այն բաներուն, որոնք վերջերս գիտցուեցան տարբերուն վրայ»: Յետոյ Փրօֆ. է. Րէյ, Լանքէսթըր անգլիական ընկերակցութեան 1906 ի նախագահը, յայտարարեց Նիւ Եօքքի նախագահական ճառին մէջ. «Այս երկրագունդին տարբարանական տարբերուն տեսակներէն են և անփոփոխելիութեան վրայ մեր գաղափարը այլեւս քանդուած է, և պէտք է տեղի տալ նորագոյն ըմբռնումներու»: Ասիկա զօնազան տեսակէտներով գոհացուցիչ է, որու համաձայն, 1.—Դիտական ապացոյցներով հաստատուած է թէ աշխարհ արդիւնք մըն է և ջնջման առակ, 2.—Դիտականները հետզհետէ Ս. Դրոց սկզբունքին կուգան, և 3.—Կը ջնջուի այն յաճախ գովուած փաստը թէ գիտնականները յաւիտենապես անխաղ են և աստուածաբանները յաւիտենապես անհիշ, իբրեւ բանապաշտական գրողներ, ինչպէս որ Ար-

գիական Եկեղեցւոյ հեղինակներ, ա՛յնքան յանդգնութեամբ և բացարձակապէս կը հաստատեն:

Բ. — Իմաստակներու ծաւալումը մեր մեջ. — Չպիտի ուզէի ասոնց նկատմամբ բան մը ըսել, քանզի ասոնք նախորդներուն խառնակներն են, և կը կապկեն անոնց ըստծները՝ առանց որոշ բնութեամբ: Ծիծաղելի բաներ մըն են ասոնք, որ շատ անգամ, փխրափառներէ աւելի փխրափայ, առնոց չըսածները իրենք կ'ըսեն, որպէս զի զիտուն երեւան, զարգացեալի համարու հանեն: Երբ ընդունին բացուի, Ռեյնանի, Վոլթէրի բառերով կը սկսին ճառել, անոնց անունով խօսիլ: Մեծ, մեծ մարդերու հետ գործ ունենալ, անոնց հետ յարաբերել կը ցուցնեն, բայց զարմանքն չունէ որ զանոնք կը գերազանցեն: Չոր օրինակ Ռեյնան իր «Յիսուսի կեանքը»-ին մէջ, Յիսուսի անձին դէմ շատ բան ըսելէ յետոյ, վերջապէս սապէս կ'եզրակացնէ: «Ինչ էլ որ լինի ապագան, Յիսուսին չէ գերազանցելու: Յիսուսի պաշտամունքը կը մնայ յաւիտենական երկատասարդ, նրա յիշատակը միշտ արցունքներ կը խլէ մեր աչքերէց, նրա տանջանքները կը մորմոքեն լուսազոյն սրբուկը: Ինչոր դարերու մարդկանց որդիներ ի մէջ չի լինի աւելի մեծ, քան Յիսուս» (էջ 209): Այս իմաստակները, այս ինքնահաւան շնորհունակները, շատ անգին կ'անցնին այս աշխարհէն, և Յիսուսի մեծութիւնը՝ իբր մարդ՝ ուրանալու չափ կը կուրծնան, թողունք Անոր Աստուածութիւնը — որուն ի սրտէ և անկասկած կը հաւատանք մենք, և ըսել պիտի ուզէի զիտեմ, քանզի հաւատաք իր գերազոյն աստիճանին մէջ գիտակցութեան կը փոխուի — և անամօթաբար, անպատկառօրէն Յիսուսը նախապաշարմունքներու, ոտասպեղներու հեղինակ ու հիմնադիր կը հռչակեն: Ասանկներ ճակատ առնել ու խօսին ալ «խողերու առջեւ մարդարիտներ թափել է», քանզի ասոնք ոչ թէ ճշմարտութիւնը կը փնտռեն, այլ իրենց «ես»-ը կ'ուզեն առաջ քնել: «Առքա զոր ինչ ոչն իմանան՝ հայտնին. և զայն եւս՝ զոր բնութեամբ փրկեւ զանխօս անխօսութեամբ, ի նոպին ապականեացն»:

Առքա են ատեցեալք, չոգմոգք՝ երթեալ զհետ ցանկութեանց իւրեանց, ի սէրս իւրեանց խարդախութեամբ, լինին ընդ ձեզ ուրախակիցք. աներկիւղ զանձինս ճարակին. ամպք անջրդիք հողմակոծեալք, ծառք պտղակորոյսք կրկնամեւք՝ խլեալք արմատաքի. անաստ ալիք ծովու որ միշտ վերփրկեն զիւրեանց զանձանց զամօթ. աստեղք մոլարք, որոց վիճ խաւարին յաւիտենից պահեալ է»:

Գ. Արծաթսիրութեան եւ աշխարհասիրութեան ծաւալումը. — Տէրն մեր Յիսուս Բրիտոս արդէն շատ պարզ ու մեկին առակով մը ցուցուցած է «հոգօք աշխարհականօք» ծանրանալուն վտանգը, պատմաւով սերմանացանին առակը, ուր արծաթասիրութիւն ու աշխարհասիրութիւն կը նմանցնէ փուշերու, որոնք իրենց մէջ սերմանուած սերմերը կը խնդեն: Գուցէ շատեր պիտի սրտնեղին այս տողերը կարդալով, և պիտի պօռան երեսիս «Մենք դրական մարդ կ'ուզենք, դրական և ոչ վերացական»: Բայց քիչ մը թող համբերեն և լսեն ինձմէ թէ, ես չեմ արհամարհեր երբեք հարստութիւնը, երբ անոր ենթակաները կը տեսնուին հարստութեան, և ոչ թէ անոր յաւիտենական ծառան ու երկրպագուն կ'ըլլան. երբ հարստութիւնը կը նկատեն միջոց լուսազոյնս ծառայելու մարդկութեան և ոչ թէ նպաստի. երբ տրամադրելի չեն ըներ անոր՝ իրենց միտքը, հոգին, կեանքն ու նկարագիրը. երբ հարցնուածու մարմաջէն բռնուած չեն և անոր համար չեն զոհեր ուղղամտութիւն, արդարութիւն. ալլապէս ի հարկէ խոտելի են ու խեղճ, և մարդկութեան կերպարանքին տակ հրէշներ են մարդախոշոշ, որոնք դրամի, փառքի, հարստութեան համար աւելն ինչ կը զոհեն. — Իրենց կեանքը, ոլաւիւր, միտքն ու հոգին, ամէն բան: Ասոնք, թողունք որ խաղաղ, երջանիկ կեանք մը չեն կրնար վայելիլ, շատ անգամ առողջութիւնն անգամ հառաչելով կը վնասեն: Հիմա, սիրելի բարեկամներս, ըսէ՛ք, Յիսուս մեզ սիրելուն համար թէ ատելուն համար կը պատուիրէ «չճանրանալ հոգօք աշխարհականօք»:

Դ. — Տնտեսական շագնապի ծաւալում. — Այն, որքան շատ են չբաւարոթեան նախ-
ճիրները, որքան բազմաթիւ են աղքատ-
ութեան զոհերը: Կը ճանչնամ բարեկամ-
ներ, որոնք քրիստոնէական օրինակելի
կեանքով կ'ապրէին, բայց յետոյ տնտեսա-
կան տագնապին զոհ գային: Մինչև այսօր
կը կուռին, կը պայքարին հացի խնդրին
համար: Խեղճերը շուարած մնացած են ու
քիչ չէ յուսահատութենէ մոռնողներու
թիւը: Այս պայմաններուն մէջ շատ դժ-
ուար է «հաւատքը պահել, ընթացքը կա-
տարել»: Եկեղեցի, կրօնք, Աստուած ա-
մէն բան մոռցնել փոխադրեալ հացի խն-
դիրը, և մատի վրայ կը համրուին անոնք
որ կը նախընտրեն մեռնիլ, նահատակուիլ
ողջ, ողջ, քան զոհել իրենց սկզբունքը:
Իրաւ որ այդ տեսակ դժնդակ պարագա-
ներու մէջ է որ երեւան կուգայ բուն մար-
դը, նկարագրի, սկզբունքի տէր քրիս-
տոնեան, բայց ո՞րքան ցանցաւ է անանկ-
ներու թիւը: Դանիին՝ կը գտնէք որ քա-
ջութեամբ ըսեն «Ո՛վ կրնայ զիս Բրիտտոսի
սէրէն բաժնել»: Իրաւամբ կ'ըսեմ թէ մեր
համայնքին մեծագոյն մասին եկեղեցիէն
ուծանալուն պատճառներէն մէկն ալ արն-
տեսական տագնապն է, և մենք կրնանք
միջոցներ խորհիլ: Ասկէ առաջ Սեբաստիոյ
մէջ կար ճիշդ այս նպատակաւ կազմուած
ընկերութիւն մը, որ պիտի օգնէր այն
բարեկամներուն, առանց յարանուանական
խտիրներու, որոնք բարի, պարկեշտ,
աստուածապաշտ ըլլալով՝ ճամբուն վարի
քովը լնկած էին, ինչ որ կրնար իրենց
նկարագրին սպառնալ: Հաղիւ կրցաւ եր-
կու թշուառներու վերականգնումին պատ-
ճառ ըլլալ՝ իր ամենաչնչին նպաստով, և
հիմա՝ անդամներուն մեծագոյն մասին ի
վիճակի չըլլալուն՝ լուծուեցաւ այդ ընկե-
րութիւնը, թէև կը բաղձայ նորէն վերա-
կազմուիլ: Ես կը մտածեմ որ, եթէ այս
ուղղութեամբ ջանքեր ըլլան մեծ, շատ
մեծ գործ մը կատարած կ'ըլլանք: Այս աղ-
քատախնամի չի նմանիր, որ աղքատին ա-
փը բան մը դնելով գոհանայ, այլ անոր
գործ հայթայթել, դրամագլուխ մը տալ և
կամ արտասահման ղրկել կը ջանայ, որ-

պէս զի աղքատը ինքնիրմով աշխատի ու
իր վիճակը բարեփոխէ:

Ե. — Անարժան կղերներու ծաւալում. —
Ահաւասիկ զօրեղագոյն պատճառ մը եւս:
Զիֆթէ Սարաֆ իրաւունք ունէր «Բիւ-
զանդիոն»-ի էջերուն մէջ գրելու. «Եկեղե-
ցիին բարեկարգութեան նախաձեռնողի
եղողները նախ իրենց դասակարգին մաք-
րութեանը թող խստապահանջ ըլլան. երբ
եկեղեցական դասակարգը խղճամիտ ու
մաքուր անձնիք կազմուած ըլլայ, Եկեղե-
ցիին ալ բարեկարգութիւնը ինքնին կու-
գայ. ապա թէ ոչ երբ անարժաններով
խնդուած ըլլայ նոյն դասակարգը, եկե-
ղեցական բարեկարգութեան համար տրո-
ւած քրոշումներն ալ թող թի վրայ միայն
կը մնան: Յաւալի է որ այս ճշմարտու-
թիւնները անցեալ տարի ալ, այս տարի
ալ, մենք աշխարհականներս ենք որ ստիպ-
ուած կ'ըլլանք հրապարակաւ յիշեցնելու
մեր եկեղեցականներուն»:

Աժեմը չաժեմը նետուած է եկեղեցա-
կան ասպարէզ, առանց գիտակցութիւնն
ու կոչումը ճանչնալու այդ բարձր ու
վսեմ պաշտօնին: Աչքերնիդ դարձուցէ՛ք
չորս կողմ, և միայն պիտի տեսնէք խեղճ,
ապիկար, նոյն իսկ հասարակ ընթերցանու-
թենէ զուրկ կղերներ, թէ՛ քաղաքի և թէ՛
գիւղի մէջ, բացառութիւններն յարգելով
— թողունք նկարագրի, ընդունակու-
թեան, յարմարութեան յատկութիւնները,
որ ամենէն աւելի փնտռուելիք ու նկա-
տի առնուելիք կէտերն են: Եւ ի՞նչպէս
հոգեւոր կեանք, կրօնական զգացում,
կենդանի հաւատք ակընկալել, պահանջե-
լայս տեսակ հովիւներ ունեցող ժողովուրդէ
մը: Պարզապէս կղերականութիւնը գործա-
ւորութեան պէս բան մը եղած է: Կը հաւա-
տա՞ք: ականատես եղած եմ այնպիսի
կղերներու, որոնք եկեղեցիին, մէջ, ժա-
մերգութեան ատեն, ժողովուրդին ներկա-
յութեան, իրարու հետ կուռած են մի
միայն 50-60 փարայի համար:

Մինչև որ իրենց կոչումին գիտակից,
նուիրուած, խռով կեանքով ապրող, ան-
բասիր հոգեւորականութիւն մը չունենանք,
բան մը չսպասենք: Պիտի համարձակու-

ըսելու թէ վերեւ յիշուած ուժացումի պատճառներն ալ մասամբ իւր ք կղերականութեան ինկածութեան արդիւնքներն են: Թող ունենանք անձնուէր, անձնուրաց, անշահախնդիր կղերներ, որոնք մի միայն հոգիներու փրկութեան, բարձրացման, աստուածացման տենչովը ուռած սիրտ մը կրեն, թող ունենանք բանիւ և արդեամբ Աւետարանը քարոզող հոգեւորականութիւն մը, այն ատեն «լեռներ պիտի փոխադրուին», անհատութեան ու անկրօնութեան խաւարը պիտի խուսափի, երկիրը երկինքի մը, աշխարհ՝ դրախտի մը պիտի վերածուի: Այն ատեն հեթանոսական ու կուսապաշտական բոլոր բազմոցներ, չաստուածներ պիտի խորտակուին, ինչպէս Դագոնը՝ Տապանակին առջև:

Սեբասիա

Յ. ԱԼՓՈՒՆԵԱՆ

ԴՊՐՈՑԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Աղեքսանդրիոյ Աղղ. վարժարաններու տնօրէն Բրօֆ. Գայանան, հանրածանօթ իր բարոյական բարձր արժանիքով և մանկավարժական-մասնագիտական հմտութեամբ, իր պաշտօնավարութեան մասին հետեւեալ կարեւոր պայմաններն առաջարկած է նոյն վարժարանաց հոգաբարձութեան, որ սիրով ընդունած է զանոնք: Գահիրէի Լուսաբեր-Արեւէն քաղելով՝ բոլոր վարժարաններու տեսչութեանց և Հոգաբարձութեանց լուրջ ուշադրութեան կը ներկայացնենք այդ պայմանները:

«Ա. Ինչ որ ալ ըլլան իր քաղաքական հայեացքները հանրային խնդիրներու մասին, ինքը չի կրնար, իբրեւ վարժարանի Տնօրէն, ու է ազգային քաղաքական կուսակցութեան պատկանիլ, և երբէք չի կրնար թոյլատրել որ ունէ պաշտօնական մարմին, անհատապէս կամ կէս-պաշտօնապէս ջանայ կուսակցական այս կամ այն միջոցներով ազդել իր վրայ կամ թեւադրանքներ ընել իրեն:

Բ. Չի կրնար նմանապէս ընդունիլ որ իր ձեռքին տակ գտնուող ուսուցչական

մարմնոյն անդամները ունէ ազգային-քաղաքական կուսակցութեան պատկանին, և կամ նոյն իսկ տեղական այս կամ այն կուսակցութեան կողմը յարին. այլ իրենց ամբողջ պարտականութիւնը պիտի ըլլայ սոսկ և միմիայն իրենց ուսուցչական պաշտօնովը զբաղիլ:

Գ. Չի կրնար ընդունիլ որ դպրոցին զաստիարակիչ ուղղութիւնը հակաքրիստոնէական ըլլայ, և կամ մայրենի Եկեղեցւոյն հանդէպ յարգանքի ու է զանցառութիւն գործուի:

Դ. Չի կրնար ընդունիլ որ վարժարանի գործերուն միջամտելու իրաւունք չունեցող մարդիկ՝ անտեղի եւ քմահաճ միջամտութիւններով դպրոցին վարչական մեքենան խանգարեն:

Ե. Ընդունելով հանդերձ Հոգաբարձութեան հսկողի իրաւունքը և խորհրդակցական իրաւասութիւնը կրթական հարցերու մասին, չի կրնար ընդունիլ որ յիշալ մարմինը իր մանկավարժական ներքին կարգադրութիւններուն մէջ ի դէպս և յանդէպս միջամտութիւններ ի գործ դնէ, նկատելով որ վարժարանաց յառաջդիմութիւնը Տնօրէնին պատասխանատուութեան տակ կը գտնուի:»

Ս Ե Ր Պ

Հուրիւ առելու մօմը ընդիոյք կը հալի.
Արփույն շողիւն՝ ժայռ կոյսերը սառոյցի.
Կիրճերս ամէն ասանկ, Տէ՛ր իմ, կը շուծուին,
Մէջ քու սիրոյդ հալոցին:

Ասեղութիւնս դժոխքմբեր, դաւաճան,
Հեռս ու նախանձս, որ, սրտիս մէջ կը վրիսան,
Կ'անեւանան, ամիւն կ'ըլլան անկասկած,
Երբ հոն ցայտէ Սիրոյդ կայծ:

Փըցար մը մեղի, մարմաց մը պիղծ, եսսսսս,
Շահամոյի դոյզն հեռքն անգամ ու բստուի
Չի երջմարտիւր երբեք հո՛ն, իմ հոգւոյս մէջ
Երբ հոն վառի՛... Սէրդ անհեղ:

ԼՈՒՍՆԹԱԴ

ՄՈՌՑՈՒԱԾ ԷՋԵՐ

Սկեպտիկ զգացումներու, եւ ուտոր անխուսափելի ճիտեւանք՝ ազգային եւ ընկերական անկեալ բարքերու ներկայ տխուր շրջանին մէջ, շինիչ տպաւորութիւն մը պիտի կրնայ գործել մոռցուած մէկ էջը յաւէտ անմոռանալի դաստիարակի մը տաղանդաւոր զրազէտի մը, որպիսին էր ողբացեալ ուսուցչապետը՝ Ռեթէոս Յ. Պէրպէրեան. —

ԿԻՒՐԱԿԷՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Շարաթն ամբողջ մեր գործին կամ պաշտօնին անհատական հոգեբանական զբաղելէ յետոյ, արժան չէ՞ որ գէթ կիրակի օրն, որ Բրիտանիայի համար խոհերու և սուրբ զբաղումներու յատկացեալ օրն է, մեր միտքը վեր բարձրացնենք մարմնոյ ու աշխարհի իրերէն, ընդլայնենք մեր հոգւոյն հորիզոնն, երկրի ձայներէն գարձներէ մեր ականջը ձայներու, որք վերէն՝ երկնքէն կուգան։ Եւ ո՞ր լաւագոյնս կրնանք ընել զայն, եթէ ոչ եկեղեցւոյ մէջ։

Արդարեւ չեմ անձկափափեր զեկեղեցին միայն նիւթական տաճարներու մէջ. բնութիւնն ինքնին տաճար մ'է, անհամեմատ կերպով առաւել վեհալայր քան ձեռագործ եկեղեցիներն, բայց անուրանալի է որ մեծ է ազդեցութիւնն զգացման մը հաւաքական արտայայտութեան։

Այս զգացում մարդուն ամենէն ազնուական յատկանիշներէն մին է, զայն տածել անուցանել, մարդուն ազնուականութիւնը պահպանել է. թմբեցնել զայն՝ նուաասացնել է մարդկութիւնը։

Եկեղեցւոյն մէջ մանաւանդ այդ վեհ զգացումը կը գտնէ իւր ճարակը։ Եւ յետոյ, չկայ կրօն առանց բարոյականի։ Այդ բարոյականի գերազանց դասագիրքն է Աւետարանը, յորմէ հաստատուած կ'ընթերցուին եկեղեցւոյ մէջ ու կը մեկնուին մերթ քաւողչէն։ Մարգարէք և Աւաքեալք ալ իրենց պատկառելի լեզուն լսելի կ'ընեն անդ՝ տալու համար բարձր բարոյականի մը պատգամներն, որք այլապէս վեհ նուիրագործում մը կ'ընծայեն յաւիտենական ճշմար-

տութեանց։ Ու ամէն ինչ որ կը կարդա՝ դացուի անդ, ամէն ինչ որ կ'երգուի, կը չնչէ ոգի մը շիրտը։ Խաղաղութեան, խոնարհութեան, անբնական ոգի մը որ դեռ այնքան կը պակսի մեզ, որպէս զայնքան տողորուելու պէտք ունինք տուեալին։ Ամէն բան եկեղեցւոյ մէջ կրնայ յիշեցնէ՞ մանաւանդ Բրիտանիայն՝ նորա Աստուածային Հիմնադրին կենաց այլապէս երևոյթները, կեանք մը որ մաուրի մը մէջ կը սկսի և Խաչի մը վրայ կ'աւարտի, կեանք մը որ խոնարհներու սիրոյն նուիրուած է և մարդկային եղբայրութեան քարոզիչն է կենդանի։ Եկեղեցին ապա դաստարան մ'է բարոյականի։ Գերազանցապէս բարոյական է անոր միջոցաւ։

Մանկութեան օրերուս յիշատակն անվրիպելի և զօրաւոր կերպով կ'արթննայ եկեղեցւոյ մէջ։

Եկեղեցւոյ երգերէն խորապէս յուզուած եմ յաճախ, ի լուր այդ մեղեդեաց, արտայայտութիւն զուտ և ջերմ հաւատոյ յԱստուած և յանմահութիւն, զոր կ'երգեն մերթ մանուկներու հրեշտակային բարբառքն, մերթ քանանայից լուրջ և բամբ ձայները։ Ամբողջ մանկութիւնն է որ կը յառնէ, անոյշ ու պաշտելի ձայներու ու դէմքերու երամ մը իբր ծածկուած բոյնէ մը թուի կ'առնու, կը թեւածէ նուիրական միջոցին մէջ, խառնուելով սրբապան երգերուն ու պատկերներուն, և մեզ պարուրող խորհրդաւոր նմայքն ու սուրբ հրապոյրը կը յաւելու։ Այդպիսի վսեմապէս բանաստեղծական դարձած միջավայրի մը մէջ, ժամերով մոռցած եմ չղթիւնաւ, կնոջ մը պէս։ Յետոյ երբ դուրս ելած եմ եկեղեցիէն, զգացած եմ որ հոգիս աւելի թեթեւացած է ու հեշտ կը թրթռայ ազնիւ զգացումներու տակ։

Այո՛, պէտք է երթալ եկեղեցի, գէթ շարաթը մի անդամ, կիրակի օրերը. պէտք է երթարկուիլ անոր բարոյարար բարձրացուցիչ ներգործութեան, զրաղեցնել անդ քիչ մը տալն մեր հոգին այնպիսի խոհերով ու յայդերով որք միշտ հետք մը պիտի թողուն մեր վրայ։

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

“ԿՐՕՆԻ ԴԱՍԵՐ,”

Ա.

Վերջերս այս անունով դասագիրք մը հրատարակուած է Գիր. Տ. Մուշեղ Եպիսկոպոսի աշխատասիրութեամբ, և վաւերացմամբ Կեդր. Պատկ. Կրօն. Ժողովոյ:

Ժողովը պէտք է յիշէր թէ ինք պարտաւոր է Սահմանադրութեան 28րդ յօդուածին տրամադրութեամբ Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդութիւններն անխախտ պահել, և Տ. Մուշեղ Եպիսկոպոսի մը կողմէ ներկայացուած կրօնի դասագիրք մը բացառիկ և լուրջ քննութենէ մը անցընել, քանի որ ծանօթ էին անոր գաղափարները՝ իր յօդուածներով և եպիսկոպոսական ուխտագրով:

Դասագրքին պարունակութիւնը ներկայացնենք:

Դասագիրքը կը բաղկանայ երկու գլխաւոր հատուածներէ. 1. Բրիստոնէական Եկեղեցւոյ վարդապետութիւնը. 2. Խորհուրդ:

Վարդապետութիւնը կը պարունակէ 8 գլուխներ. 1. Բրիստոսաբանութիւն, 2. Փրկագործութիւն, 3. Ս. Հոգին, 4. Հայր, 5. Ս. Երրորդութիւն, 6. Արարչագործութիւն, 7. Անմահութիւն Հոգւոյ, 8. Եկեղեցի:

Խորհուրդը կը պարունակէ 7 գլուխներ.

1. Մկրտութիւն, 2. Դրոշմ, 3. Ապաշխարութիւն, 4. Հաղորդութիւն, 5. Պսակ կամ Ամուսնութիւն, 6. Օծումն Հիւանդաց, 7. Կարգ կամ Զեռնադրութիւն:

Կրօնքի ուսուցիչն երբ իր դասախօսութեան մէջ հաւատք չի դնել և կը կառչի միայն բնութեան, անոր խորը կը զննէ, կ'որոնէ Անիմանալոյն գաղտնիքը, այն ատեն իր խօսքին առջև նիւթականէն աննիւթին գոյութեան փաստերն անբաւական և անզօր կը թուին, կ'ընայ նիւթականութեան հաստու մի ցանցին մէջ. հոն հոգեկանապէս ըմբռնումին հաւատքին և մտաւորական համոզումին մէջ պայքարը կը ծա-

ռանայ. այն ատեն մարդկային հոգեկան վիճակներ, խաղաղութիւնը, բարոյական կեանքը կ'ապականի. կը քայքայի: Այդ չէ կրօնական ուսուցչին պաշտօնը. նա պէտք է որ քննէ ինչ որ ըմբռնելի է մտաց, նա պէտք է հաւատայ ինչ որ ի վեր է քան զմիտս. վարսէ ընթերցողին սրաին ու մտքին՝ Հայ Եկեղեցւոյ դարերէ ի վեր ընդունած վարդապետութիւնը՝ ըստ Ս. Աւետարանին, որ իր դոյութեան յայթանակին կոթողն եղած է: Ներելի չէ որ մէկը իր նպատակին կամ կողմած մէկ նոր դողափարին մէջ յաջողելու համար, կամ իր մասնաւոր մէկ դաւանանքին հետ հաշտեցնելու համար Հայ Եկեղեցւոյ վարդապետութիւնը անոր սկզբունքները, ճշմարտութիւնը սքօղէ, ծայրատէ, կոէ, կոխէ, յարդարէ և նոր ինչ յօրինէ. այդ պարագային չարափառութիւն է որ կը կատարէ, կեղծիք է որ կը կերպուորէ, անոր կ'ըսենք Շնորհալիին հետ, «հաւատք ծածկեալ կամ կեղծաւորեալ ոչ է հեռի յանհաւատութիւն»: »

Հայ Եկեղեցւոյ պաշտօնեայ մը պէտք չէ սքօլաստիկական զարդին մէջ խաթարել, թաղել: Դաւանանքը հաւատքի գործ պէտք է նկատուի. գիտնալ և զգալ զուգրն թացաբար պէտք է քալին հաւատքին հետ գիրկնդ խառնուած:

Պօղոս Առաքեալ իր թղթերուն մէջ միզի կը սորվեցնէ թէ ի՞նչ է մարդկային միտքը Աստուծոյ անբաւութիւնը իմանալու մէջ, ի՞նչ է Հոգւոյն զօրութիւնը հաւատքի դաւանութեան մէջ, ի՞նչ է աշխարհի իմաստութիւնը Աստուծոյ անհունութեան ըմբռնումին առջև: Ահա՛ իրեն խօսքերը, ուր պիտի կարենանք ճշդիւ հաւատքի պէտքը մեր հետեւելիք շաւղին հաւատոյ դաւանութեան վարդապետութեան ճամբուն վրայ: «Եւ բանն իմ և քարոզութիւնն ոչ պատիր բանիւք իմաստութեան, այլ արդեամբք Հոգւոյն և զօրութեամբ, զի հաւատք ձեր մի՛ իցեն իմաստութեամբ մարդկան, այլ զօրութեամբ Աստուծոյ... զոր ոչ ոք յիշխանաց աշխարհիս սցսորիկ ծանեաւ, զի եթէ էր ծանուցեալ, ոչ արդեօք զՏէրն փառաց ի խաչ հանէին: »

«Այլ մեզ յայտնեաց Աստուած Հոգւովն

իւրով, զի Հոգին զամենայն քննէ և զխորս Աստուծոյ: Զի ո՞րք ի մարդկանէ գիտէ ինչ զմարդոյն, եթէ ոչ հոգի մարդոյն որ ի նմա, նոյնպէս և ոչ զԱստուծոյն որ զիտէ, եթէ ոչ Հոգին Աստուծոյ: ... Եւ զոր խոսիմքս՝ ոչ եթէ մարդկեղէն ուսմամբ ճարտարութեան բանից, այլ վարդապետութեամբ Հոգւոյն Սրբոյ, ընդ հոգեւորս զհոգեւորսն համեմատեմք: Քանզի չնչաւոր մարդ ոչ ընդունի զՀոգւոյն Աստուծոյ, զի յիմարութիւն է նմա. և ոչ կարէ գիտել, եթէ հոգեպէս քննիցի: Իսկ հոգեւորն քննէ զամենայն, և ինքն յուժնքէ ոչ քննի: Իսկ արդ ո՞վ գիտաց զմիտս Տեառն» (Ա. Կորնթ. Բ. 4—16):

«Ո՛ւր քննիչ աշխարհիս այսորիկ, ո՞չ ապաքէն յիմարեցոյց Աստուած զիմաստութիւն աշխարհիս այսորիկ» (Ա. Կորնթ. Ա. 20):

«Զի իմաստութիւն աշխարհիս այսորիկ յիմարութիւն է առաջի Աստուծոյ» (Ա. Կորնթ. Գ. 19):

«Մ՛վ խորք մեծութեան և իմաստութեան և գիտութեան Աստուծոյ, որպէս առանց քննելոյ են դատաստանք նորա, և առանց զննելոյ են ճանապարհք նորա: Զի ո՞վ գիտաց զմիտս Տեառն, կամ ո՞վ խորհրդակից եղև նմա: Զի ի նմանէ և նովաւ և ի նոյն ամենայն» (Հռոմ. ԺԱ. 33):

Հին Ուխտն ալ գրեթէ բառ առ բառ կը խօսի Աստուծոյ իմաստութեան վրայ. հասցի իր մարգարէութեան մէջ կը հարցնէ իրացումով. «Մ՛ գիտաց զմիտս Տեառն, և ո՞ եղև նմա խորհրդակից՝ եթէ խելամուտ արասցէ զնա, կամ ո՞ եցոյց նմա զճանապարհ իմաստութեան» (Եսայի Խ. 12.):

Այս հիման վրայ հասկցած են մեր նախնիք ալ հաւատոյ ըմբռնումը:

«Հնար իմանալոյ անիմանալին, ոչ այլ ինչ է, բայց հաւատալ ասացելոցն ի Ս. Գիրս, և ոչ ընդ քննութեամբ արկանել զանքննելին»

Ներսէս Շնորհալի

«Ո՞չ արարածք կարեն քննել զԱրարիչն, և ոչ զանգում զզանգիչն գիտէ»

Ագաթանգեղոս

«Քանզի մի Աստուծոյ էութիւնն անքննին է, և անհաս քննութեամբ, առ նորա անքննութիւնն՝ ընծայութիւն անքննութեան մատուցանելի, և առ էութեան նորին դաւանութիւնք զիտութեան և ոչ քննութեան»:

Եզնիկ

* Մենք այս վկայութիւնները մէջ բերինք, ոչ թէ անոր համար որ Մուշեղ Եպիսկոպոս այս ճշմարտութեան հակառակ ուղղութիւն մը կը ներկայացնէ իր դասագրքին մէջ, այլ միայն հասկցնելու համար թէ միտքը պէտք է քննէ մինչև հոն, ուրկէ անգին վարագոյր մը կայ թանձր, անթափանցիկ, ուր միտքը պէտք է հաւատայ, ըմբռնէ հոգւոյն զօրութեամբ, մարդկային քննութիւնը, զննութիւնը պէտք է դադրի, տեղի տոյ Աստուծային էութեան, խորհրդեց և վարդապետութեան առջեւ, և հոգեկան վերասլացիկ ճառագայթումը փայլատակէ հաւատքի ջահն ի ձեռին:

Այժմ անցնինք դասագրքին մէջ ցրիւցանուած հակասութիւններուն կամ անորոշ ու տատանուող բացատրութեանց:

Ուրիշ ուրիշ հաւատալիք մը, վարդապետութիւն մը նախ իր ժխտումնաւոր նախադասութեամբ կը փռուի. կը տարակուսի կամ ի հակասակէն յառաջ կը բերէ. ապա կ'անդրադառնայ և այս կերպով կը շուրեցնէ. կը պղտորէ տշակերտին միտքը, Որո՞ւ փորի ան, որո՞ւ հաւատայ, որք ընդունի. հոն կուռ, հաստատուն, անայլալ, որոշ բացատրութիւն մը չի ջանաւորեալ:

Առնենք քանի մը տողեր զանազան էջերէ:

Նախ Հաւատամքին մէջ կը սորվեցնէ թէ պէտք է հաւատալ ի Հայրն Ամենակալ յԱրարիչն երկնի և երկրի, երեւելաց և անեւրեւելից (եջ 14.) Եւ ապա (33 էջին մէջ) կ'ըսէ. «Աստուած Հայր կը կոչուի հաւատոյ Հանդանակին մէջ ոչ թէ իբր Արարիչ, ոչ իբր խնամող» և ըն. : Բացատրութիւն յոգի և սխալ:

23 էջին մէջ կ'ըսէ. «Ձեռք գիտեր թէ Բրիտանոս ինչ մարմնով յարութիւն առաւ»:

և քանի մը տող վար կը յարէ . «Քրիստոս յարութիւն առած էր զրեքէ ճիշդ այն մարմնով որոշ խաչուած ու թաղուած էր» : Աշակերտը այս բացատրութեան մէջ չի հարցնէր ինքնիրեն . եթէ ճիշտ այն մարմնով յարութիւն առած էր , ուրեմն վերի չենք զիտեր , և զրեքէ բաւը ինչ հասկըցնելու համար նշանակուած են :

25 էջին մէջ կ'ըսէ . «Մեր Եկեղեցին ալ սուրբերուն մասնաւոր յարգանք կ'ընծայէ» : Բայց քիչ մը վարը կը յաւելու . «Բայց անոնց վրայ անձնական արդիւնք չտեսներ ընտալ» : Ըսել կ'ուզէ չ'ընդունիր անոնց բարեխօսութեան հանգամանքը , ինչպէս բացայայտ կը խօսի Ս . Կոյս Մարիամին վրայ , որուն բարեխօսութիւնը չ'ընդունիր . և միայն աննշան տեղ մը ցոյց կու տայ Քրիստոնէական տնտեսութեան մէջ :

34 էջին մէջ կ'ըսէ . «Տերտուղիոնոսի կողմէ գործածուած trinité բառը հայերէնի մէջ քերականական բառերու սահմանին մէջ չէ թարգմանուած , երբ Երրորդութիւն բառով մը բացատրուած է . աւելի լաւ պիտի ըլլար թերեւս փոխանակ դասական ձեով Երրորդութիւն թարգմանելու , ըսել Երեւակութիւն» : Զիտէր թէ Երրորդութիւն և Երեւակութիւն բառերուն մէջ հնագին տարբերութիւն կայ , և քրիստոնէական վարդապետութեան մէջ ընտալ չէ կարելի ընդունիլ Երեւակութիւն բառը , որովհետեւ Երրորդութիւն բառին մէջ , Երեւակութիւն ի միութեան , կամ միութիւն յերեքութեան գաղափարը կ'ըմբռնուի . բայց Երեւակութիւն բառին մէջ սոսկ երեքութիւն զատ զատ առնուած , առանց միութեան գաղափարին : Այդ մոլար գաղափարը տակայն կը փութայ ուղղել , անմիջապէս յետոյ աւելցնելով . «Բայց խնդիրը բառին վրայ չէ , այսօր ազանց բառազննական քննութիւններու ենթարկելու , աւելի գաղափարին կը նայինք և կը գործածենք Երրորդութիւն բառը» :

40 էջին մէջ կ'ըսէ . «Որչափ որ եկեղեցւոյ ընդհանուր հաւատքը մեզ կը սորվեցնէ թէ Աստուած ոչինչէ ստեղծեց տիեզերքը , բայց Ս . Գրոց մէջ բացէ ի բաց

և յայտնի կերպով այդ տեսակ վարդապետութեան մը չենք հանդիպիր ընտալ» . իսկ 41 էջին մէջ կը յարէ . «Այդ յաւիտենական էակն է որ ոչինչէ ստեղծեց տիեզերքը» :

44 էջին մէջ կ'ըսէ . «Պէտք չէ մոռնալ թէ մարդկութիւնը կը հաւատայ նաեւ հոգեկան աշխարհի մը գոյութեան , որուն ընտանիքները համակ հոգեզէն էակներ են» : Սակայն 45 էջին մէջ կը տարակուսի . «Անոնց մասին տակաւին ճշգրիտ տեղեկութիւններ կը պակսին . . . Նոր Կտակարանի ալ կարծես կ'ուզէ հաստատել հին հեթանոսական հաւատալիքներու համաձայն թէ իւրաքանչիւր մարդ իր պահապան հրեշտակը ունի» : Աւետարանին մէջ երբ Քրիստոս կ'ըսէ՝ «Հրեշտակք նոցա յերկինս հաւապաղ տեսանեն զերեսս Հօր իմոյ» (Մատթ . ԺԷ . 10) , այլ եւս Հին Կտակին մէջ յայտնուած տարակուսանքը մշակելու չէ Աւետարանին Քրիստոսի բառերուն մէջ ալ , ուստի և կարծես կ'ուզէ բառերը անտեղի : 73 էջին մէջ կ'ըսէ . «Մկրտութիւնը միջոցն է սկզբնական մեղքէն փրկուելու» , և քանի մը տող վար կը յաւելու «Բայց տակաւին և ոչ մէկ տեղ Հին Կտակարանին մէջ կը հանդիպինք հատուածի մը սրուն մէջէն կարելի ըլլայ սկզբնական մեղքի վարդապետութիւն մը յառաջ բերել» :

91 էջին մէջ կ'ըսէ . «Քրիստոս հացը և գինին իբր իր մարմնը և արիւնը առաւ անոնց» . և 105 էջին մէջ կը յաւելու . «Հաղորդութեան խորհուրդը Հայ Եկեղեցւոյ համար աւելի յիշատակ մ'է քան գոյացափոխութիւն , որու փոխարէն փոխադրումն բառը ընդունած է , բայց վերջածուտ է , Լուստի կ'ընդունի թէ Քրիստոս մարմնապէս ներկայ է հաղորդութեան մէջ (էջ 101) , այդ գաղափարին մէջ կը նշմարուէր տեսակ մը իրապաշտութիւն որ համաստեղութեան նկարագիր կուտար հաղորդութեան (102) : Հայկական եկեղեցւոյ պատմական և վաւերական աղբիւրները քննած ժամանակնիս սա եզրակացութեան կը յանգինք . «Հաղորդութեան հացին և գինին տարբեր անայսլ կը մնան , Քրիստոս հոգեւորապէս ներկայ կը գտնուի ա-

նոնց մէջ, (բաղդատէ վերը յիշած Լուսերի դաւանանքը և համատուեաթեան գաղափարը) Բրիտտոսի հոգեկան այդ ներկայութեան ոյժով այդ նշանակները համազօր կ'ըլլան Բրիտտոսի ճշմարիտ մարմինին և արիւնին:»

Այս բացատրութիւններէն որո՞ւն պիտի հետեւի աշակերտը:

111 էջին մէջ կ'ըսէ: «Բրիտտոսէական հնագոյն Եկեղեցիները չբաւականացան ամուսնութիւնը քստ հին և նոր ըմբռնումի սրբազան աւարողութիւն մը նկատելէ, և զայն դասեցին Խորհուրդներուն կարգը»: 112 էջին մէջ կ'ըսուի: «մեր և միւս արեւելեան Եկեղեցիները իրեւ սրբազան աւարողութեան կը նային անոր»:

Սխալ բացատրութիւններ, վարդապետութեան այլասացիկ բմոռնութիւններ կը վերագրէ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, որոց համար կարգաւ կը պատասխանենք:

ՀՐԱՅԻՆ ԲՆԱԿ. ԷՔԵՆՆԵՐ

ՊՕՍԴՈՆԻ ՀԱՅԵՐՈՒԻ ԲՈՂՈՔԸ

Պօսդոնի Հայոց ոչ-կուսակցական ժողովին կարգադիր Յաննանիտիւրը հետեւեալ գիրն ուղղած է Տաւրի խաղաղութեան հրապարակական խնդրանքով: Այդ ժողովին մասին որ տպուած է եւ օրինակն այժմ Պատրիարքարանը տպուած, պէտք չենք տեսնել որ եւ կ'արժիք յայտնելու: Պատուած դիպիւրն իմին շատ պերճաբան եւ արդէն:

ԱՄԸ հապառիւ

Ստեփան Սրբազան Դուրեան

Պատրիարք Կ. Պոլսոյ եւ Նախագահ

Ազգային Երեսփոխանական ժողովոյ
ի Դուռ-Դարու, Կ. Պոլիս

Սրբազան Հայր,

Սեպտեմբեր 18ին Դաշնակցական ժողով մը տեղի ունեցած էր Պօսդոնի մէջ: Առիթը Պ. Ակնունիի Պօսդոն այցելութիւնն էր: Դաշնակցական կոմիտէն քաղաքիս և շրջակայաններու հայութիւնը ժողովի կը հրաւիրէր Պ. Ակնունիի դասախօսութիւնը մտիկ ընելու: Նոր դէմք մը տեսնելու բնական

հետաքրքրութիւնը մեծ ազդակ մը եղած էր խուռն քաղաքիս մը համախմբելու որոշուած ժողովարանին մէջ:

Պ. Ակնունի խօսած էր «համերաշխութիւն» նիւթին վրայ: Ժողովը փակուելու պահուն, ատենապետը Դաշնակցական երիտասարդ մը՝ հեռագրի մը բանաձեւը կարգացած և հրաւիրած էր ժողովուրդը վաւերացնել զայն: Ժողովը ինքն արդար պատահութիւն մը տրուած չէր իր դատողութիւնը գործածելու կամ արտայայտելու: Երբ դիտողութիւններ եղած էին, երբ լազրուած էր հեռագրի դրկել Դաշնակցութեան կողմէ, աւանդ ժողովուրդին հաւանութիւնը հարկադրելու: Դաշնակցականներու սղեւորուած ծախսարութիւնները գիտցած էին դիտողութիւնները ծափելու ժխտելու մէջ ջնջել: Գեղեցիկ մեթոտ մը՝ բացատրութիւնն կամ յայտնի հակառակութիւնն խուսափելու համար:

Ամսոյս 2ին մէջ, ոչ-կուսակցականներս, գումարեցինք հրապարակային ժողով մը, Ազգ. Սրահին մէջ: Անպիսի բազմութիւն մը ժամանակէն առաջ խոսուած էր Սրահը: Շատեր, մասնաւորապէս ընտանիքներ, տեղ չգտնելով, ետ գաւնալ պարտաւորուեցան մեր ժողովին, ուր վերոյիշեալ հեռագրին հարցը մանրամասն լուսաբանութեան ենթարկուելէ վերջը 400 և 500 և 600 ներկայներու բացառիկ մեծամասնութեամբ որոշուեցաւ հեռագրի 2րդ Սրբազանութեան, քեզ Սեպտ. 18ի ծանօթ Դաշնակցական հեռագրի Պօսդոնի և շրջակայաններու ոչ-կուսակցական Հայութեան կամքը չի ներկայացներ:

Ներկայ գտնուող Դաշնակցականները, իրենց յատկանշական սովորութեան համաձայն, ամէն ճիշդ թափեցին ժողովը խանգարելու և ամէն գնով արգելք ըլլալու որ ժողովուրդը իր կամքը ազատօրէն չի յայտնէ: Սակայն, հակառակ իրենց բռնաջանքներուն, ժողովուրդը յաջողեցաւ իր վերջին ճիշդ յայտնել: Բուհարիութիւնը կատարուեցաւ և երեք անգամ կրկնուեցաւ, որոշ և յստակ կերպով, և արդիւնքը եղաւ ջախջախիչ մեծամասնութիւն մը հեռագրի ժխտութեան, և միայն 7 քուէ, և այն ալ Դաշնակցականներէ:

նակցական քուէ, հեռագրի վաւերացումին համար:

Հոս աւելորդ չենք համարիր յիշատակել տեղեկագրական ճշդութեան համար, հետեւեալ միջադէպը:

Ժողովուրդին պատահութիւնն անդու համար, որպէս զի խնդրին երկու կողմն ալ լուսած ըլլան և կատարեալ գիտակցութեամբ չարփին, աւելի արուեստաւ ներկայ Գաշնակցականներուն, որ իրենց մէջէն յարմարագոյնները խօսին համերաշխութեան նիւթին վրայ: Իրենց ընկերներէն մին, հեղինակաւոր և պատասխանատու Գաշնակցական մը, օգտուեցաւ ընծայուած աւելիքէն և ջանաց իր կրցածին չափ լոյս սփռել այս խորհրդաւոր նիւթին վրայ: Բայց երբ քիչ վերջը շեղեցաւ բուն նիւթէն և հարկադրուեցաւ թողուլ բնութիւնը, բարձրաձայն գոչեց. «Ո՛վ որ յեղատիոսական է այս արտահէն թող գտնուի ելնէ»: Բանի մը Գաշնակցականներ հետեւեցան իրեն, և միջադէպը ինքնին փակուեցաւ:

Ահա. 18ի յիշուած նոսաղրին իմաստը համարաշխութեան հարցը եղած է: Ծրագրիս պատճէնը Ձեր Արքայութեան յայտնի ըլլալու է արդէն: Պարզ իրողութիւն մըն է ինքնին թէ անկեղծ, ճշմարիտ համերաշխութեան հարցը ամէն Հայու սրտին մօտ է: Համերաշխութեան, եթէ կարելի ու գործնական ըլլայ, թուրքիս բնակչութիւնը բազկացնող ալազան ցեղերու հետ, համերաշխութեան, մանաւանդ, հայ կուսակցութիւններու մէջ, հիմնուած փոխադարձ յարգանքի վրայ, իսկաւ մըն է որ վերջին ծայր հրապուրիչ է, և այս իսկ պատճառաւ կ'երեւի թէ գծաւոր փորձութիւն մը կը ներկայացնէ կուսակցական փառասիրութիւններու յարմարելու: Հայ ժողովուրդը, յար անհամերաշխ և չարունակ համերաշխութեան ցանկացող, միշտ պատրաստ է խանդավառուելու երբ այն իսկաւ լին աւանդով խօսին իրեն: Բայց բարեբաղդաբար ժողովուրդներն ալ իրենց խորհելու շրջաններն ունին, և այն ատեն քաղաքական յայտագրերը թափանցիկ կ'ըլլան և իրենց թաքունապատկը յատկոյնն պարզուի կ'սկսի:

Բայց մեզ զբաղեցնող անմիջական կէտը այն եղաւ թէ Գաշնակցականները իրաւունք ունէին Ահա. 18ի իրենց հեռագիրը ժողովուրդին վաւերացումովը նուիրագործուած ներկայացնելու: Սակայն ժողովուրդը իր բացարձակ վճիռովը հաստատեց թէ այդ իրաւունքը չէր ճանչնար իրենց: Հոս կ'արժէ հարցնել թէ ինչո՞ւ:

Հայ ժողովուրդը մեծ ցաւով դիտած էր թէ Գաշնակցութիւնը պատասխանատու էր հետեւեալ չարիքներուն համար:

Ա. Պատական և ազգային սահմանադրական շրջանի մը մէջ բիրտ ուժի կիրարկում:

Բ. Յարձակում Հայուն դարաւոր կրօնական և ընտանեկան սրբազան աւանդութիւններուն վրայ:

Գ. Յարձակում հայ կրթական յարկերէն ներս և անիրաւ ազդեցութիւն հայ մանկտիւն մասող երեւակայութեան վրայ:

Դ. Ազգային քաղաքականութիւն մը որ բնաւ հաշտ չէ գիտական, օրինական և բարոյական տեսակէտին, մարդկային յառաջդիմութեան օրէնքներուն և պատմական փորձառութիւններուն հետ:

Հետեւաբար ժողովուրդը արդէն լեցուած էր, և այս անգամ որեւէ համերաշխութեան խոստում, հոգ չէ թէ որքան զբաւիչ հեռանկարով լուսավորուած, բուական չէր որ ժողովուրդը որ և է երկդիմի քայլով մը իր դիրքը վտանգէր:

Մեր ժողովին մէջ ներկայ գտնուող Գաշնակցականները ժողովը խանգարելու իրենց ճիգերովը, ցոյց տուին նաև, զրգազարթ, թէ իրենց համար համերաշխութիւնը տեսական յայտարարութիւն մըն էր միայն, կուսակցական շահերու նուիրաւորութեամբ յղացուած:

Այս իրողութիւնները տեղեկագրելով Ձեր Արքայութեան, ինչպէս նաև Պատկաւելի Երեսփոխանական Ժողովին, կը խնդրենք որ մեր տեղեկագրութիւնը Ձեր բարձր ուշադրութեան առարկայ ընել հաճիք: Պարտաւորուած ենք միանգամայն տիրութեամբ եզրակացնել թէ երբ ժողովուրդի մը իրաւունքներուն այս բռնաբարութիւն տեղի կ'ունենայ Ամերիկայի

պէս օրէնքի և Ազատութեան միջավայրի մը մէջ, նոյն անսանձ տիրապետական ոգին ինչ սահմաններու կրնայ յանգիլ այն վայրերուն մէջ, ուր այդ ձգտումը սանձող ազդեցութիւնները կը պակսին:

Համբուրելով Զեր Սուրբ Աջը, մնամ, որդիական խոնարհ ակնածանօք:

Ի Դիմաց Կարգադիր Յանձնախմբի
(Ստորագրուած) Մ. ՄԱՐՏԻԿԵԱՆ

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Այնպիսի ժամանակ մը երբ եկեղեցական բարեկարգութեան հարցը կ'ուսուժնասիրուի Հայ թերթերուն և մամուլորապէս Տաճարի մէջ, շահեկան է գիտնալ թէ ուս հասարակութիւնն ալ զրազած է նմանօրինակ հարցերով: Ս. Էջմիածնի պաշտօնաթերթը, Արարաց, իր վերջին թիւին մէջ շահագրգռական տեղեկութիւններ կը բերէ մեզի այդ մասին:

Գլխաւորապէս եկեղեց. երկու խնդիրներ կը զբաղեցնեն ուս ժողովուրդը: Առաջինն է տեղական եկեղեց. ժողով գումարելու հարցը, և երկրորդը՝ եպիսկոպոսներու պատրաստութեան, տարիքին, և անոնց նշանակուելու խնդիրը:

Ռուսական կարեւոր թերթ մը այդպիսի ժողովի մը գումարումը անհրաժեշտ կը նկատէ, Եկեղեցիին թուլացած ազդեցութիւնը տիրապնդելու, և կարգաւորելու համար մէկ քանի խնդիրներ որ առաջ եկած են իրրեւ ժամանակի անխուսափելի բերմունք: «Ժողով գումարելու հակառակ կրնան ըլլալ անոնք միայն որ եկեղեցիին բարոյական ազդեցութեան թուլացման և կազմալուծման փափաքող են. այդպիսիները Եկեղեցիին յայտնի հակառակորդներն են: Ժողով գումարելու կը հակառակին նաեւ եկեղեց. անարժան գործիչները, որոնք ժողովէն կը վախճան իրրեւ անաչառ դատաւորէ մը, թէեւ այդ վախը

չկարենան հրապարակաւ յայտնել»: Ռուս թերթը կը յայտնէ թէ Եկեղեցիի բարիքին ցանկացող բարձրաստիճան եկեղեցականներ հակառակ չեն ժողովին. քայց կ'եզրակացնէ թէ ժողովին որոշումները պէտք չէ վերաբերին Եկեղեցիի ոգիին, այլ անոր արտաքին գործունէութեանը:

Գալով եպիսկոպոսներու պատրաստութեան, նոյն թերթը անբաւական կը գտնէ այժմ գործադրուող միջոցը, որով ոչ միայն կեդրոնին, այլ և թեմերուն անձնօթ մարդիկ կը նշանակուին եպիսկոպոս: Ռուս Սինօդը մտադիր է յարմար նկատուած անձեր հրա իրել Բեղերսպուրկ և այնտեղ պահել ժամանակ մը, անոնց բարոյական և մտաւոր կարողութեանց մօտէն ծանօթանալու համար: Բայց այդ միջոցն անբաւական կը նկատուի, և կ'առաջարկուի վերադառնալ նախնի դարերու սովորութեան, այն է ընտրութիւնը կատարել այն անձին վրայ որ իրրեւ տեղական գործիչ լաւ յայտնի է ընտրողներուն: Հեռաւոր և միայն համբաւով ծանօթ անձերու ընտրութիւնը՝ քիչ քացառութեամբ հիասթափ ըրած է ընտրողները: Ռուս Սինօդը եպիսկոպոսներու համար ուրիշ հանգամանք մը եւս կարեւոր կը համարի, այն է անոնց հասակը: Երկար տարիներ պաշտօնավարող անձ մը ձեռք կը բերէ որոշ փորձառութիւն, պատրաստութիւն և պաշտօնին վայել ծանրաբարոյութիւն:

Եպիսկոպոսներու համար Պօղոս կը դրէ. «Մի՛ մատաղատունկ, զի մի հպարտացեալ, ի դատաստան սատանայի անկցի. այլ պարտ է նմա վկայութիւն բարի յարաբերոյն ունել»: (Ա. Տիմ. Գ. 6): Բայց եթէ եպիսկոպոսը «մատաղատունկ» պէտք չէ ըլլայ, ըլլալու չէ նաեւ զառամալ, և իր հոգեւոր ու վարչական պաշտօնները կատարելու անկարող:

Վանքեւոյ քաղաքագործիւն.— Ռուս Սինօդը, վանքերու բարեկարգութեան համար հետեւեալ միջոցները կը խորհի. 1, Այսուհետեւ միայն համակեցական վանքեր բանալ և նոյն դրութիւնը մոցնել եղած վանքերուն մէջ, ուր որ հնարաւոր է: 2, Միաբաններու վրայ աշակուրջ հսկողու-

թիւն, և վտանական կեանքի մէջ անփորձները մշտապէս զեկավարելու համար ծերունիներ կարգել: 3, Աշխատիլ վստահաններու մէջ մտցնել այնպիսի մարմնական աշխատանք, որ համապատասխանէ վանքի պէտքերուն և միեւնոյն ժամանակ իրենց հոգեւոր կրթութեանը, ու ծուլութենէ խուսափելու միջոց դառնայ: 4, Եկեղեցական պաշտամունքը կատարել սահմանուած կանոնով և երկրւածութեամբ, ժամերգութեան ժամանակ գործածել հին երգեցողութիւնը՝ չթոյլատրել հոգեւոր երգերու խաղաղական ոճով երգեցողութիւնը: 5, Այն վանքերը, ուր կան բաւական թուով միաբաններ, չպահել վարձկան խմբապետներ և վարձկան խմբեր: 6, Ուշագիշտ ըլլալ որ վանականները անխափան պարտաւորուին ժամերգութեան յաճախել և ժողովուրդէն անջատ, տաճարէն տեղ բռնեն:

Ռուս Սինոդը ուրիշ կարգադրութիւններ ալ ըրած է, որ կը վերաբերին վանականներու վարք ու բարքի թերութիւններուն, որոնք առաջ կուգան աշխարհականներու հետ անոնց ունեցած յարաբերութիւններէն: Որովհետեւ արեւցոտթիւնը — ռուս ժողովրդի այս գլխաւոր պատուհասը — վանքերու ալ մեծ չտրիքն է: Սինոդը կ'առաջադրէ պահանջել վանք նոր մտնողներէն՝ պարտաւորական զգուստութիւն, կ'արգիլէ վանական սեղաններու վրայ ոգելից ըմպելիքի գործածութիւնը, թոյլ չի տար ոչ միաբաններու և ոչ վանահայրերու խուցերուն մէջ ոգելից ըմպելիք պահել: Կ'առաջարկէ անոնց ծանօթացնել ոգելից ըմպելիքներու վնասակար հետեւանքները, և հեռու պահել վանականները պարապորդութենէ՝ օգտակար աշխատանքներու վարժեցնելով: Սինոդը ծխելն ալ կ'արգիլէ վանականներուն, վնասակար կը համարի վանականներու երթեւեկութիւնը աշխարհականներու տները և աշխարհականներուն՝ վանականներու խուցերը: Սինոդն որոշած է նաև ցանցաւոր վանականները մէկ վան-

քէն միւսը չտեղափոխել, այլ աշխատիլ ուղղել իրենց գանձուած տեղը: Կնար եղածին չտի խուսափիլ վանականները ծխատէր քահանայի պաշտօնակատար նշանակելէ, նոյնպէս և կուսանաց վանքերուն մէջ պաշտօն յանձնելէ, վանականները նուէր հանգանակելու չուղարկել և ըն:

* * Ռուսիոյ մէջ 812 վանք կայ: 421ը այրերու և 391ը կիներու: Կրօնաւորներու և կրօնաւորութիւններու ընդհանուր թիւն է 68,770, որուն 16,498ը կրօնաւորութիւն: Սինոդը առաջադրած է առաջնորդներուն յանձնարարել որ միջոցներ ձեռք առնեն կրօնաւորական կեանքը բարձրացնելու, և պարտաւորեն վանքերը, որ ծառայեն Եկեղեցիին և հայրենիքին:

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՄԻՇՏ ԱՆԿԵՐՊԱՐԱՆ

Ազգային վարչական գործերու անկերպարանութիւնը կը շարունակուի տակաւին: Ազգ. ժողովին անցեալ ուրբաթի նիստը յետաձգուեցաւ «ազատական» և «կեդրոն»ի խմբակցութեանց միջև համաձայնութեան ելլալ մը գտնելու յուսով: Հետեւապէս պարապ ժամանակ վստանած եղաւ այն բաղմունքները որոնք օր եկած խննուած էր Ղալաթիոյ եկեղեցոյն բակր: Տեսուչ Խորհուրդներն ալ նիստ չէն գումարած մեծ մասամբ, ինչպէս նիստ չէր գումարած Խառն ժողովը անցեալ չաթթու: Համերաշխութեան ժողովը իր խորհրդակցութիւնները չկրցաւ աւարտել և մինչև այս տողերը գրուած ատենը «Կեդրոնի Խմբակցութեան» և «Ազատական Կուսակցութեան» միջև համաձայնութիւն մը չէր կրցած գոյանալ: Խառն ժողովը թէեւ այս չորեքշաբթի գումարուեցաւ Գատրգիւղ Ս. Պատրիարք հօր բնակարանին մէջ և ընթացիկ գործերով զբաղեցաւ, սակայն Ս. Պատրիարք Հօր եղած հարցումները իր հրաժարականին Բ. Դուռը մատուցուած

ըլլալուն կամ չըլլալուն մասին, որոշ պատահան մը չկրցան ստանալ: Նոյն նիստին մէջ խնդիր եղած է Ազգ. Ժողովոյ նիստերուն ոստիկանական հսկողութեամբ կատարուելու հարցը: Յիսուն երեսփոխաններ հանրագործութիւն մը մատուցած էին Ս. Պատրիարքին, որով իրենց կեանքի ապահովութեան և երկու ընդդիմադիր տարրերու միջև երեւան գալիք բողոքումին առաջը առնելու համար ևս ոստիկան բերել կ'առաջարկէին. այդ մասին ալ վիճաբանուեցաւ, և սակայն որոշում մը չը տրուեցաւ, սպասուելով որ նոյն (Դշ.) իրիկունը գումարուելիք համերաշխական ժողովը որոշում մը տայ: Բայց ինչպէս վերը գրուեցաւ արդէն այն ալ որոշման մը չէր կրցած յանդիլ՝ ևս այս սողերը գրուած միջոցին (Եշ.) յայտնի չէր թէ ի՞նչ պայմաններու մէջ տեղի պիտի կրնար ունենալ Ազգ. Ժողովը որ երէկ (Ուրբ.) օրը դռնփակ նիստի համար հրաւիրուած էր «հրաժարեալ» Ս. Պատրիարք հօր կողմէ: Այս սկեպտիկ դարուն մէջ, թէ և մենք ալ կասկածոտ կը մնանք համերաշխական ու է ժողովի մը մէջ իրական համաձայնութիւն գոյացնելու կարելիութեան վրայ, և սակայն պիտի փափաքէինք որ բացարձակապէս խաբուած ըլլանք մեր կասկածին մէջ, և ուրախութիւնն ունենանք յառաջիկայ շարժում աւետելու յաջող ելքը Պատրիարքական և Վարչական տագնապին որ ինքն ալ արդիւնքն է Ազգ. ճգնաժամային մեծ տագնապի մը:

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԶԳԱՑՈՒՄԸ հպատակութիւն է Ազգ. Վարչութեան գաղափարին՝ Ազգ. Իշխանութեան հեղինակութիւնը բարձր բռնելու, ի հարկին չվարանելով օրինական միջոցներու դիմելու, ինչ որ համաձայն է Ազգ. Սահմանադրութեան ալ ոգւոյն: Այս իմաստով Ազգ. Երեսփ. Ժողովին ուղղուած երկու հանրագիրներ, մէկը Սկիւտարէն 522 ստորագրութեամբ, միւսը Սամաթիայէն՝ 127 ստորագրութեամբ, երկուքն ալ վաւերացուած թաղ. Խորհուրդներէն:

ԵՏԻՐՆԷՆ կը գրեն թէ ՎԵՀ. Կայսեր նոյն քաղաքն այցելութեան առթիւ պաշտօնական անձերու տուած նուէրներու մէջ կը գտնուի նաև վիճակին առաջնորդ Տ. Արսէն Ծ. Վ. Վեհուճիի նուիրուած թանկագին ռակի ժամացոյցը որ յատուկ պատուիրակութեան միջոցաւ յանձնուած է Ն. Գերապատուութեան: Այս առթիւ կուսակալ պէյը յատուկ պաշտօնագրով ՎԵՀ. Կայսեր քարեւները հաղորդած է Առաջնորդին որ ընկերակցութեամբ Դերձակեան Տ. Արսէն Ա. քհնյ. Ի. շնորհակալութեան այցելութիւն տուած է կուսակալ պէյին:

ԲԱՐԵՍԷՐ Պ. Ա. Մանթաշեան 5000 ռալ, նուիրած է Թիֆլիզի Նորաշէնի Մ. Աստուածածնի եկեղեցին:

ԲԺՇԿԱՊԵՏ Պ. Ա. Բաբեանի նոր տշխատասիրութիւնը՝ Եկեղեցական առողջաբանութեան հարցեր՝ որ պատմաստի մըն է իր նախորդ գործին (Եկեղեց. առողջաբանութիւն) քննադատութեանց, հայրապետական հաւանութեան արժանացք է, և ի մօտոյ լոյս կը տեսնէ էջմիածնէն:

ԱԶԳ. ԵՐԵՍԺՈՒՄԱՆ ընտրուած է Պալատէն դատաւոր Յարութիւն էֆ. Մօստիշեան, 283 քուէարկուներու 204ին քուէովը: Կը շնորհաւորենք ընտրեալը և ընտրողները հաւաստապէս: Գուրուչէն մէն ևս Ազգ. Երեսփոխան ընտրուած է Միհրան էֆ. Մուրատեան: Շնորհաւորութիւններ:

ԿՈՄԻՏԱՍ Վ., իր երկրորդ դասախօսութիւնը պիտի կատարէ վաղը Կիր. Նոյ. 7 կէսօրէ վերջ ժամը Յին Ղալաթիոյ Խորհրդարանը խօսելով հայ եկեղեց. երաժշտութեան վրայ. կը յուսանք որ եկեղեցին և իր երաժշտութիւնը սիրողները պիտի փութան օգտուիլ այս հազուադէպ առիթէն:

ԱՐՏՈՆԱՏԷՐ

ՀՄԱՅՆՈՒ ԳԶՆԵ. ԷԳՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄՐԱԳԻՐ

ԶԱՐԲԱՅՐ ԳԶՆԵ. ԿԷԶԻՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

Զաւահիճըլար, Յակոբեան խան

RECEIVED

NOV 11 1887

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

LIBRARY
CHICAGO, ILL.

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
CHICAGO, ILL.

LIBRARY
CHICAGO, ILL.

1136 Ութածալ էջ.— Websterի հրատարակչներէն առնուած 800 գեղեցիկ պատկերներով

Եզական աշխատութիւն. գնահատուած Հայ և օտար բազմաթիւ անձնաւորութիւններէ: Անգլիներէն Հոմանիշներ բառերու տակերը դրուած յար և նման Websterի: Մասնաւոր Յաւելուած մը Անգլիական և Ամերիկեան բազմաթիւ ոճերու և և ասացումներու օրինակներով բացատրուած: Մասնաւոր Յաւելուած մը Անգլիական նոր ուղղագրութեան բարեհաճ արտօնութեամբ, Simplified Spelling Boardի:

Անկլո-Հայ Փափազեան բառարանը՝ արդիւնք երկարամեայ ուսումնասիրութեան և տաժանելի աշխատութեան, պատրաստուած է մեծ ինամքով և գլխաւոր հետեւողութեամբ Websterի և Cassellի վերջին բառագրոյ և նիւթական ու բարոյական ու է զոնողութիւն չէ ինչպիսիք՝ Ամենակատարեալը, Ամենալստահելին և Ամարցելի ընելու համար:

Անկլո-Հայ Փափազեան բառարանը կը ծախուի մասնաւորապէս պատրաստուած տուփերու մէջ ի գին անգլիական լաթակազմ 70 իսկ կիսակաշին 75 դահեկանի, փօսթի ծախքով 75 և 80 դահեկանի: Ամերիկայի համար 3 տոլար և 3.20ի, իսկ Եւրոպայի համար 16 և 17 ֆրանքի: Փոխարժէքը զրկել չէքով կամ մանտարութով ուղղակի հեղինակին, առանց երրորդի մը, յապաղմանց և այլ անպատեհութեանց տեղի չտրուելու համար:

Հասցէ,

Z. D. S. PAPAZIAN,

Bible House

Constantinople, (Turkey)

ԿԻՒՐԻՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎՐԱՅ, Պատմութիւն Հայ վրական յարաբերութեանց, է. դարու մէջ: Պատմական ուսումնասիրութիւն Հայոց Եկեղեց. պատմութենէն քառասնամեայ շրջանի մը (574-610) վրայ: Գրեց Վիեննայի Միսթարեան միաբանութենէն Հ. Ներսէս Ակիմեան: Տպ. Վիեննա 1910: Աւելի քան 300 էջերէ բաղկացած հատոր մը, ուր կ'ուսումնասիրուին Վրաց Հայոցմէ բաժանման պարագաները, որոնց մէջ մեծ դեր ունեցած է Կիւրիոնի գործունէութիւնը, և որոնք սերտիւ կապուած են Հայոց կաթողիկոսութեան 574-610 շրջանի պատմութեան հետ: Այս գործը՝ արդիւնք մանրակրկիտ ուսումնասիրութեան մը և պրպտումներու, արժանի է հայ բանասէրներու և եկեղեցական պատմութեամբ հետաքրքրուողներու լուրջ ուշադրութեան: Գին 5 ֆրանք:

ՍԵՒ ԷԶԸ. գրեց Հ. Մկրտիչ Պոստեան: Տպ. Վենետիկ, 1910: Սրտառուչ պատմութեանքներ հայ ժամանակակից արիւնոտ կեանքէն: Գին 1 ֆրանք:

Ներսէս ի. Տ. Կարապետեանց, միաբան Բագուի Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ, ստացանք երեք հատորիկներ ժողովրդական քարոզներ, խօսուած Բագուի Ս. Լուսաւորիչ Մայր Եկեղեցին մէջ: Ա.— ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԿԱՆ, որ պսակուած է Իզմիրեանց Սահակ-Մեսրոպեան մրցանակով, և առաջին տպագրութիւն մը ունեցած է Պոլիս, «Ի հաշիւ Սահակ-Մեսրոպեան ուսումնական մասնաժողովին», և Բ. տպ. Թիֆլիզ: Բ.— ՀԱՅԻ ԼՈՒՍԱՆՈՐԻԶԸ, և Գ.— ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ, խօսուած Բագուի Մայր Եկեղեցին մէջ 1909 Սեպտ. 13ին, յաւուր օժման Ն. Վեհափառութեան Տ. Տ. Մատթէոս Բ.ի, սրբալնակատար Կաթողիկոսին Ամենայն Հայոց: Կրօնքի և ազգի սիրոյն շերտ զգացումներով օժուած գիրքեր, որոնց հաւատացեալներէն վերժանումը պիտի կրնար չլինիչ դեր մը ունենալ հոգիներու վրայ: Գին իւրաքանչիւրին 10 կոպէկ: